ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2018-2020թթ. Հայաստանի Հանրապետության պետական պարտքի վերաբերյալ (հուլիս ամսվա վերջի դրությամբ)









2020թ. հուլիսի 31-ի դրությամբ՝

1) ՀՀ պետական պարտքը կազմել է 3,851.94 մլրդ. ՀՀ դրամ, աճելով 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 9.64%-ով, իսկ 2019 և 2018թթ. հուլիսի 31-ի նկատմամբ համապատասխանաբար՝ 16.06%-ով և 18.53%-ով,

2) ՀՀ կառավարության պարտքը կազմել է 3,619.75 մլրդ. ՀՀ դրամ, աճելով 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 10.4%-ով, իսկ 2019 և 2018թթ. հուլիսի 31-ի նկատմամբ համապատասխանաբար՝ 17.73%-ով և 21.78%-ով,

3) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 232.19 մլրդ. ՀՀ դրամ, նվազելով 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 1.08%-ով, իսկ 2019 և 2018թթ. հուլիսի 31-ի նկատմամբ նվազելով համապատասխանաբար՝ 4.96%-ով և 16.26%-ով,

4) ՀՀ պետական պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 7,939.53 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 8.4%-ով, իսկ 2019 և 2018թթ. հուլիսի 31-ի նկատմամբ աճելով համապատասխանաբար՝ 13.83%-ով և 17.47%-ով,

5) ՀՀ կառավարության պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 7,460.94 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 9.16%-ով, իսկ 2019 և 2018թթ. հուլիսի 31-ի նկատմամբ աճելով համապատասխանաբար՝ 15.47%-ով և 20.69%-ով,

6) ՀՀ ԿԲ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 478.59 մլն. ԱՄՆ դոլար, նվազելով 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 2.19-ով, իսկ 2019 և 2018թթ. հուլիսի 31-ի նկատմամբ նվազելով համապատասխանաբար՝ 6.79%-ով և 17.01%-ով,

7) ՀՀ կառավարության արտաքին պարտքը կազմել է 2,705.57 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 6.46%-ով, իսկ 2019 և 2018թթ. հուլիսի 31-ի նկատմամբ աճելով համապատասխանաբար՝ 15.7%-ով և 15.43%-ով,

8) ՀՀ կառավարության ներքին պարտքը կազմել է 914.18 մլրդ. ՀՀ դրամ, աճելով 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 24.01%-ով, իսկ 2019 և 2018թթ. հուլիսի 31-ի նկատմամբ աճելով համապատասխանաբար՝ 24.18%-ով և 45.43%-ով,

9) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 232.19 մլրդ. ՀՀ դրամ, նվազելով 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 1.08%-ով, իսկ 2019 և 2018թթ. հուլիսի 31-ի նկատմամբ նվազելով համապատասխանաբար՝ 4.96%-ով և 16.26%-ով,

10) ՀՀ կառավարության արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 5,576.65 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2019 թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 5.26%-ով, իսկ 2019 և 2018թթ. հուլիսի 31-ի նկատմամբ աճելով համապատասխանաբար՝ 13.47%-ով և 14.4%-ով,

11) ՀՀ կառավարության ներքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 1,884.29 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2019 թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 22.62%-ով, իսկ 2019 և 2018թթ. հուլիսի 31-ի նկատմամբ համապատասխանաբար՝ 21.79%-ով և 44.13%-ով,

12) ՀՀ ԿԲ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 478.59 մլն. ԱՄՆ դոլար, նվազելով 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 2.19-ով, իսկ 2019 և 2018թթ. հուլիսի 31-ի նկատմամբ նվազելով համապատասխանաբար՝ 6.79%-ով և 17.01%-ով:

ԱԺԲԳ









ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքը 2020 թ. հուլիսի 31-ի դրությամբ կազմել է 4,606.12 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 6.88%-ով, իսկ 2019 և 2018թթ. հուլիսի 31-ի նկատմամբ աճելով համապատասխանաբար՝ 12.89%-ով և 15.18%-ով:

2020թ. հուլիսի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի կառուցվածքում՝

1) միջազգային կազմակերպությունների բաժինը կազմել է 76.68%, ինչը ավել է 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արձանագրված ցուցանիշից 1.56 տոկոսային կետով, իսկ 2019 և 2018թթ. հուլիսի 31-ի համեմատությամբ պակաս է համապատասխանաբար՝ 0.12 և 1.62 տոկոսային կետով,

2) օտարերկրյա պետությունների բաժինը կազմել է 22.88%, ինչը 2019թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ պակաս է 1.53 տոկոսային կետով, իսկ 2019 և 2018թթ. հուլիսի 31-ի համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 0.2 և 1.76 տոկոսային կետով,

3) առևտրային բանկերի բաժինը կազմել է 0.44%, ինչը 2019 թ. դեկտեմբերի 31-ի, ինչպես նաև 2019 և 2018թթ. հուլիսի 31-ի համեմատությամբ պակաս է համապատասխանաբար՝ 0.03, 0.07 և 0.14 տոկոսային կետով:

2020թ. հունվար-հուլիսին ՀՀ կառավարության պարտքի գծով վճարված՝

1) տոկոսավճարները կազմել են 83.05 մլրդ. դրամ, ինչը 2019 թ. և 2018թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 5.93 և 11.4 մլրդ դրամով,

2) ներքին տոկոսավճարները կազմել են 41.15 մլրդ. դրամ, ինչը 2019թ. և 2018թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 6.81 և 7.41 մլրդ դրամով,

3) արտաքին տոկոսավճարները կազմել են 41.9 մլրդ. դրամ, ինչը 2019թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 0.88 մլրդ դրամով, իսկ 2018թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 3.99 մլրդ դրամով:

ԱԺԲԳ

Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների), մլրդ դրամ



Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը ներքին և արտաքին փոխառու զուտ միջոցների հաշվին, մլրդ դրամ



ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար



ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար



2020թ. հունվար-հուլիսին պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը՝

1) փոխառու զուտ միջոցների հաշվին կազմել է 282.69 մլրդ. դրամ, ինչը 2019թ. և 2018թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 229.06 և 257.57 մլրդ դրամով,

2) ներքին փոխառու միջոցների հաշվին կազմել է 178.61 մլրդ. դրամ, ինչը 2019թ. և 2018թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 109.64 և 158.73 մլրդ դրամով,

3) արտաքին փոխառու միջոցների հաշվին կազմել է 104.07 մլրդ. դրամ, ինչը 2019թ. և 2018թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 119.41 և 98.83 մլրդ դրամով:

ՀՀ կառավարության կողմից 2020թ. հունվար-հուլիսին՝

1) արտաքին վարկերի սպասարկման նպատակով վճարվել է 57.21 մլն. դոլար տոկոսավճար, ինչը 2019թ. և 2018թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 3.91%-ով և 25.47%-ով,

2) արտաքին վարկերի սպասարկման նպատակով մարվել է 121.09 մլն դոլարի մայր գումար, ինչը 2019թ. և 2018թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 39.39%-ով և 53.22%-ով,

3) ստացվել են 334.07 մլն. դոլարի վարկային միջոցներ, ինչը 2019թ. և 2018թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 501.06%-ով և 270.57%-ով,

4) արտաքին վարկերի սպասարկման նպատակով վճարվել է 178.3 մլն. դոլար (տոկոսավճար և մայր գումարի մարում), ինչը 2019թ. և 2018թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 25.63%-ով և 43.07%-ով:

ԱԺԲԳ

Պետական պարտատոմսերի ծավալը, մլրդ դրամ



Պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը, օր



ՀՀ Կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը, %



ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքը, ըստ թողարկման



2020թ. հուլիսի 31-ի դրությամբ՝

1) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի ծավալը կազմել է 848.51 մլրդ դրամ, ինչը 2019թ. դեկտեմբերի 31-ի, ինչպես նաև 2019 և 2018թթ. հուլիսի 31-ի համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 167.46, 194.95 և 287.99 մլրդ. դրամով,

2) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը կազմել է 4004 օր, ինչը 2019թ. դեկտեմբերի 31-ի, ինչպես նաև 2019 և 2018թթ. հուլիսի 31-ի համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 270, 378 և 476 օրով:

ՀՀ կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը 2020թ. հուլիսի 31-ի դրությամբ կազմել է 4.59%, ինչը 2019թ. դեկտեմբերի 31-ի, ինչպես նաև 2019 և 2018թթ. հուլիսի 31-ի ցուցանիշների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար՝ 0.23, 0.53 և 0.36 տոկոսային կետերով:

ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության 2020թ. հուլիսի 31-ի դրությամբ՝

1) կարճաժամկետ պարտքի բաժինը կազմել է 1.08%, ինչը 2019թ. դեկտեմբերի 31-ի, ինչպես նաև 2019թ. և 2018թ. հուլիսի 31-ի համեմատությամբ մեծ է համապատասխանաբար՝ 0.342, 0.19 և 0.26 տոկոսային կետերով,

2) միջնաժամկետ պարտքի բաժինը կազմել է 6.11%, ինչը 2019թ. դեկտեմբերի 31-ի, ինչպես նաև 2019 և 2018թթ. հուլիսի 31-ի համեմատությամբ փոքր է համապասատխանաբար՝ 0.75, 0.99 և 1.26 տոկոսային կետերով,

3) երկարաժամկետ պարտքի բաժինը կազմել է 92.81%, ինչը 2019թ. դեկտեմբերի 31-ի, ինչպես նաև 2019 և 2018թթ. հուլիսի 31-ի համեմատությամբ մեծ է համապատասխանաբար՝ 0.41, 0.79 և 1.0 տոկոսային կետերով:

ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2021 -2023ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՂԵՆՇԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (հուլիս ամսվա վերջի դրությամբ)

ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը, տարի



Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով), %



ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի, %



ՀՀ Կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները, %



ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2021-2023թթ. ռազմավարական ծրագրով՝

1) պարտքի մինչև մարում միջին ժամկետի ուղենշային ցուցանիշը սահմանված է 8-11 տարի: ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը 2020թ. հուլիսի 31-ի դրությամբ կազմել 8.87 տարի: Այս ցուցանիշը 2019թ. հուլիսի 31-ի դրությամբ արձանագրված ցուցանիշից ավել է 0.31 տարով, իսկ 2018թ. արձանագրված ցուցանիշից պակաս է 0.15 տարով,

2) առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշռի (պետական գանձապետական պարատոմսերի գծով) ուղենշային ցուցանիշը սահմանված է առավելագույնը 20%: Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով) 2020թ. հուլիսի 31-ի դրությամբ կազմել է 12.25%, որը 2019թ. հուլիսի 31-ի դրությամբ արձանագրված մակարդակից փոքր է 2.38 տոկոսային կետով, իսկ 2018թ. հուլիսի 31-ի դրությամբ արձանագրված մակարդակից՝ 1.0 տոկոսային կետով,

3) ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշռի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 80%: ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի 2020թ. հուլիսի 31-ի դրությամբ ունեցել է հետևյալ պատկերը. ֆիքսված տոկոսադրույքով՝ 81.08%, լողացող տոկոսադրույքով՝ 18.92%: Ընդ որում, 2020թ. հուլիսի 31-ի դրությամբ արձանագրված ֆիքսված տոկոսադրույքի ցուցանիշը 2019թ. և 2018թթ. հուլիսի 31-ի համապատասխան ցուցանիշներից պակաս է համապատասխանաբար՝ 3.78 և 4.94 տոկոսային կետերով.

4) ներքին պարտքի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 25%, ՀՀ կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները 2020թ. հուլիսի 31-ի դրությամբ ունեցել են հետևյալ պատկերը. արտաքին պարտք՝ 74.74%, ներքին պարտք՝ 25.26%: Ընդ որում, 2020թ. հուլիսի 31-ի դրությամբ արձանագրված ներքին պարտքի կշռի ցուցանիշը 2019 և 2018 թթ. հուլիսի 31-ի համապատասխան ցուցանիշները գերազանցում է համապատասխանաբար՝ 1.31 և 4.11 տոկոսային կետերով: